



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՓԱՍՏԱԲԱՆԻ ՕՐ» ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Ալեքսանդր Սիրունյանի, Երվանդ Վարոսյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Լուսինե Սահակյանի, Կարեն Սարգսյանի, Մարտուն Փանոսյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի և Տիգրան Խուրշուդյանի,

քննության առնելով «Փաստաբանի օր» սահմանելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

2014 թվականի սեպտեմբեր ամսին Ֆեյսբուք սոցիալական ցանցում առկա «ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ» փակ խմբում (միայն փաստաբանների համար նախատեսված խմբում) քննարկում էր իրականացվել (առկա են տարբեր փաստաբանների կողմից արված ավելի քան հարյուր մեկնաբանություններ) «Փաստաբանի օրը» որոշելու նպատակով: «Փաստաբանի օր» սահմանելու վերաբերյալ փակ խմբի փաստաբանների կողմից քննարկվել են մասնավորապես հետևյալ օրերը՝ **սեպտեմբերի 23-ը, հոկտեմբերի 28-ը, դեկտեմբերի 10-ը, դեկտեմբերի 14-ը և հունիսի 11-ը**: Օրինակ, «Փաստաբանի օր»-ը **սեպտեմբերի 23-ին** նշելու համար ներկայացվել էր այն հիմնավորումը, որ Հայաստանի Հանրապետությունում փաստաբանության սկիզբ է ընդունվում 1923թ. սեպտեմբերի 23-ը, երբ ՀՍՍՀ դատարանակազմության կանոնագրքով նախատեսվել է քրեական և քաղաքացիական գործերի պաշտպանների կոլեգիայի ստեղծումը: Այդ կապակցությամբ ուշագրավ էին նաև հակադարձող փաստաբանների կարծիքները, ըստ որի չպետք է փաստաբանի օրը կապել ԽՍՀՄ-ի որևէ իրադարձության հետ:

Նշված օրերի վերաբերյալ միասնական կամ մեծամասնության դիրքորոշում հնարավոր չի եղել ձևավորել, ինչի կապակցությամբ Պալատի խորհուրդը «Փաստաբանի օրը» սահմանելու հարցում անհրաժեշտ է համարում հաշվի առնել նաև միջազգային համագործակցության հետ կապված առանձնահատկությունները:

19 փետրվարի 2015թ.

թիվ 05/9-Լ

Մասնավորապես, Պալատը համագործակցություն ունի (այդ թվում՝ ունի կնքված համագործակցության հուշագրեր) Ֆրանսիայի, Անգլիայի, Բուլղարիայի, Չեխիայի, Վրաստանի և այլ պետությունների փաստաբանական համայնքների հետ, որոնցում ձևավորված իրավական մշակույթին համապատասխան՝ սեպտեմբերից դեկտեմբեր ամիսներին անցկացվում են «Իրավական տարի», «Փաստաբանի օր», տարեկան ժողովներ և այլ միջոցառումներ, ինչը կխոչընդոտի այդ համայնքների ներկայացուցիչների մասնակցությունը Հայաստանում՝ ծանրաբեռնվածության պատճառով և հակառակը:

Պալատի խորհուրդը գտնում է, որ Պալատի կողմից սահմանվելիք «Փաստաբանի օրն» անհրաժեշտ է օգտագործել նաև միջազգային գործընկերների հետ համագործակցությունն առավել ամրապնդելու նպատակով, ինչը ենթադրում է այդ միջոցառումներին նաև միջազգային գործընկերներին մասնակից դարձնելուն ուղղված քաղաքականության իրականացումը:

Բացի այդ, Պալատը՝ որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտ և մասնագիտական իրավական կառույց, իր առաքելությունն է տեսնում Հայոց Յեղասպանության միջազգային ճանաչման, ինչպես նաև Հայոց ցեղասպանության ժխտողականության դեմ պայքարի գործընթացներին օժանդակություն ցուցաբերելու հարցում: Նշված նպատակին կարող է ծառայել հատկապես Հայոց Մեծ Եղեռնի զոհերի ոգեկոչման օրվա՝ ապրիլի 24-ի, կապակցությամբ միջազգային գործընկերներին Հայաստանի Հանրապետությունում ընդունելը, 1915 թվականին Թուրքիայի կողմից հայերի զանգվածային ջարդի՝ Յեղասպանության պատմությանն իրազեկելը, ինչպես նաև Հայոց Յեղասպանության զոհերի հիշատակին նվիրված միջոցառումներին մասնակից դարձնելը:

Նման պայմաններում, Պալատի խորհուրդը նպատակահարմար է համարում «Փաստաբանի օր»-ը սահմանել **ապրիլի 25-ին**, այն առումով, որ հրավիրված միջազգային գործընկերները «Փաստաբանի օրվա» կապակցությամբ Պալատի կողմից նախաձեռնված միջոցառումներից բացի, ապրիլի 24-ին հնարավորություն կունենան մասնակցելու նաև համազգային նշանակության արարողությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 15-րդ կետի, ինչպես նաև Պալատի կանոնադրության 16.5 կետի 31 ենթակետի պահանջով, Պալատի խորհուրդը միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

- **«Փաստաբանի օր»-ը նշել ապրիլի 25-ին:**

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

**19 փետրվարի 2015թ.
թիվ 05/9-L
ք. Երևան**